



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 123-Ա
ք. Երևան

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 22-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը և 2020 թվականի հոկտեմբերի 7-ի գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության ծանուցումը Հավելված 1-ում նշված տեսալսողական ծրագրերի մասով:

2. Մերժել «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության ծանուցումը Հավելված 2-ում նշված տեսալսողական ծրագրերի մասով՝ հիմք ընդունելով, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթով չի հիմնավորվել տվյալ տեսալսողական ծրագրերի առանց գովազդի տարբերակը ձեռք բերելու անհնարինությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Տեսալսողական ծրագրի անվանումը	Ժամկետը
«Setanta Sports Eurasia» «Setanta Sports Eurasia Plus»	պայմանագրի գործողության ժամկետով
«UFC»	
«Animal Planet» «Discovery Channel» «Discovery Science» «DTX» «Fine Living HD» «Food Network HD» «Investigation Discovery» («ID XTRA») «TLC» «Travel Channel HD» «Eurosport 1» «Eurosport 1 HD» «Eurosport 2» «Eurosport 2 HD»	
«РТР-Планета» «Россия-К» «Россия-24»	

Տեսալսողական ծրագրի անվանումը

«Animal Planet HD»
«Discovery Channel HD»